«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Տաթևիկ Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Արագյուղի << Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոց

Երևան 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Նպատակը՝ Բացահայտել աստվածաշնչյան առակների ազդեցությունը երեխաների դաստիարակության գործում

Հարցը՝ Ինչպե՞ս են ազդում աստվածաշնչյան առակները երեխաների արժեհամակարգի ձևավորման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

3. Հիսուսի որոշ առակներ և դրանց նշանակությունը

● Առակ խաչի մասին
● Ինչ որ տաս այն էլ կստանաս
● Երկու սերմի պատմությունը
● Անիրավ տնտեսի առակը
● Ունկդրիր լռությունը
● Առակ հպարտ ծառի մասին
● Նա, ով գիտելիք է ստանում, կորցնում է դրա մասին խոսելու հնարավորությունը
● Առակ բարի սամարացու մասին
● Սերմնացանի առակը
● Որոմների առակը

4. Եզրակացություն

5.Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակը դիդակտիկ նպատակ ունի, նույն նպատակը, որն ուներ Հիսուսը, երբ այն ասաց իր աշակերտներին և մարդկանց:
Հիսուսն իր առակների միջոցով ձգտում էր ուսուցանել ամենախորը հոգևոր ճշմարտությունները մի լեզվով, որը կարող էր հասնել բոլոր մարդկանց: Ուսուցման այս պարզ ոճը հակադրվում էր այն ժամանակվա հրեա գիտնականների բարդ լեզվին: Առակները եկեղեցականների կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրև գեղջկական, ուստի անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Զանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են *«հաւահմայք»*, *«հացահմայք»*, *«հատահարցք»*, մերժված և հաղորդության անարժան են համարել նաև *«զբախաւսք, զրատեսք, շրջողք տանէ ի տուն, հետաքրքիրք, զրուցատարք, առասպելախաւսք»*: Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն *«առասպել»* բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ: Առակ տերմինը վերաբերում է գրական արտահայտությանը, որը հիմնված է այլաբանական պատմվածքի վրա. որը ծառայում է համեմատական ձևով դասավանդելու առարկա, որը բացահայտ առարկա չէ:
Խրատական եզրակացությունը, որ հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն և այլ բառերով, 2 տեսակ է: «Ճշմարտությունը առակների հեղինակի համար երկու բովանդակություն կարող է ունենալ, երկու էություն՝ աշխարհական և եկեղեցական, ըստ որում նրա նպատակն է «կերպարանել»՝ պատկերացում տալ, բացահայտել, ցուցադրել, արտացոլել այդ երկու ճշմարտություններն այլաբանորեն: Առակի նպատակն է հասնել՝ ճշմարտությանը (դարձյալ՝ եկեղեցական և աշխարհական)պարզել օրենսդրական միջոցներով՝ կազմելով դրա համար 2 տիպի օրենքներ»: Եվ քանի որ առակագրի համար էականը «ճշմարտությունն» է, ուստի առակի առասպելն այնպես է հորինվում, որ հարմարվի բարոյակրթական մասին կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ավելի մեծ տեղ է բռնում, քան պատմվածքը: Այսինքն՝ նպատակը ուսուցողական է:
Առակը լինում է 3 տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին՝իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում, բայց բարոյական դաստիարակության ձևավորման մեջ իրենց ուրույն տեղը ունեն աստվածաշնչյան առակները։ Աստվածաշնչյան առակները համարել են ոչ միայն հայեցի և քրիստոնեական դաստիարակության, այլև երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց։

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը։ Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները։ Այս տեսանկյունից հայ աստվածաշնչյան առակները, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել կրտսեր դպրոցականների հուզաշխարհի վրա։ Այս առումով հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն առակները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն։ Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում։ Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին։ Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է։

Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի դպրոցական դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը։ Առակներն այլաբանորեն , ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն։ Առակների միջոցով է, որ դպրոցականը ընկալում է մարդու բարձրարժեքությունը , Աստծո ամենազորությունը ,միասնականության ուժը և այլն։

Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով։ Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են։ Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առածների, ասացվածքների կիրառմամբ։

Առակների դասավանդումը երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները։ Առակների միջոցով զարգանում է նաև աշակերտների ընթերցասիրությունը, կարդալու որակական հատկանիշները։

Աստվածաշնչյան առակների միջոցով երեխաների մոտ ձևավորում է սկզբունքների համակարգ ։Սկզբունքները Աստվածաշնչում գրված հիմնական ճշմարտություններ են, որոնք

օգնում են ճիշտ որոշումներ կայացնել։ Օրինակ՝ «վատ ընկերակցությունները ապականում են օգտակար սովորությունները» սկզբունքը սովորեցնում է, որ այն մարդիկ, ում հետ ընկերություն ենք անում, կարող են մեզ վրա ազդեցություն թողնել (1 Կորնթացիներ 15:33)։ Իսկ «մարդ ինչ որ ցանի, այն էլ կհնձի» սկզբունքը սովորեցնում է, որ չենք կարող խուսափել մեր արարքների հետևանքներից (Գաղատացիներ 6:7)։

Հիսուսի որոշ առակներ և դրանց նշանակությունը

Առակ խաչի մասին

Մի մարդ որոշեց, որ իրեն չափից դուրս ծանր կյանքի ուղի է բաժին ընկել : Նադիմեց Աստծուն այսպիսի խնդրանքով.

—Տե՛ր, իմ խաչը չափազանց ծանր է, և ես չեմ կարող այն տանել : Բոլորայն մարդկանց, ում ես ճանաչում եմ,նրանց խաչերն ավելի թեթև են: Չէի՞ր կարող իմ խաչն էլ ավելի թեթևով փոխարինել :

Եվ Աստված ասաց.

-Լավ, ես քեզ հրավիրում եմ իմ խաչերի շտեմարան, ընտրի՛ր քեզ համար այն մեկը, որն ինքդ կհավանես:

Մարդը եկավ շտեմարան և սկսեց իր համար խաչ ընտրել : Նավարձում էր բոլոր խաչերի ծանրությունը, և բոլորը նրան թվացին շատ ծանր: Փորձիփորձել ով բոլոր խաչերը՝ նանկատեց մուտքի մոտմի խաչ, որն իրեն ավելի թեթև թվաց, քան մյուսները: Նասաց Աստծուն.

-Թույլ տուր, այս մեկը վերցնել : -Աստված պատասխանեց. -Հենց սաէլ քո սեփական խաչն է, որը դու թողեցիր դռան մուտքի մոտայն ժամանակ, երբ սկսեցիր փորձել մնացածը:

Ինչ որ տաս այն էլ կստանաս

Մի գյուղի կենտրանում աղքատու կիսամերկ մի մարդ ողորմություն էր խնդրում բոլորից:

Սկզբում մի կին նրան մոտեցավ, որ հայտնի էր իր ժլատությամբ և նրան տվեց պառառոտված թաշկինակ: Հետո մոտեցավ ուրիշ կին, նրան տվեց տաք հագուստ և ուտելիքներ: Եվ վերջում մոտեցավ մի տատիկ և նրան տվեց մի ոսկի դահեկան: Աղքատ մարդը գոհ իր ստացվածքից ուզեց հեռանալ գյուղից և դեռ ոտքը չքաշած, գյուղում հրդեհ բռնկվեց: Աղքատը վերադարձավ և վերադարձրեց այն ամենը ինչ իրեն տվել էին, ոսկի տվողին վերադարձրեց ոսկին, տաք հագուստն ու ուտելիքը, դրանք տվողին, իսկ պառառոտված թաշկինակը վերադարձրեց թաշկինակի տիրոջը:

Ահա այսպես, ով ինչ տվել էր այն էլ ստացավ:

Երկու սերմի պատմությունը

Մի անգամ քամին ծառի երկու միանման սերմ է քշում տափաստան: Երկուսն էլ սկսում են աճել : Բայց որոշ ժամանակ անց մի ծառը փտթամանում է ու այնպիսի գեղեցիկ տեսք է ստանում, որ նույնիսկ շատհեռվից սկսում է գրավել մարդկանց: Անցորդները սկսում են հաճախնրատակ կանգ առնել , հանգստանալ : Ու ծառը սկսում է մյուս՝ ավելի անշուք ծառին հեգնել :
— Տեսնում ես՝ ինչ փիսի գեղեցիկն եմ ես, – ասում է գեղեցիկ ծառը, – դու երևի չգիտես, թե ինչ աես ճյուղերդ ու տերևներդ շառացնել : Եթե ուզես, ես քեզ կսովորեցնեմ ինչ աես գեղեցիկ աճել : Որոշ ժամանակ անց ուժեղ քամի է բարձրանում և գեղեցիկ ծառը, որը ինքնահմայքով տրբաած էր ատրում, շրջվում ու հենվում է մյուս՝ ոչ անշուք ծառին: Ու ասում է նրան.- Ինչո՞ւ դու, որ այդքան անշուք ու տգեղ էիր, մնացիր կանգնած, իսկ ես, որ այդքան օգուտ էի տալիս մարդկանց, շրջվեցի:
— Որովհետև, քանի դեռ դու զբաղված էիր քո ճյուղերն ու տերևները շառացնել ով ու ինքդ քեզանով հիանալ ով, ես իմ արմատներն էի խորացնում՝ պատրաստ ինել ով քամուն, – պատասխանում է մյուս ծառը:

Մեծ պահքի չորրորդ կիրակին ունի արարչության չորրորդ օրվան այս կյանքի չորրորդ դարի խորհուրդը և կոչվում է «**Տնտեսի կիրակի**»: Այս անունը նույնպես վերցված է այդ օրն ընթերցվող Ճաշու Ավետարանից, որտեղ խորհրդավոր կերպով պատմվում է, թե ինչպես իրապես Հարուստը՝ Աստված, արարեց իմանալի աշխարհը և այնտեղ տնտեսներ կարգեց հրեշտակներին, ապա ստեղծեց զգալի աշխարհը և այստեղ տնտես կարգեց մարդուն, իսկ այնուհետև՝ Իր կողից բխած սուրբ Արյամբ հիմնեց Եկեղեցին և այնտեղ տնտեսներ կարգեց առաքյալներին ու նրանց հետևորդներին:

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

(Ղու կ. 16 1-8)

Եվ Հիսուս իր աշակերտներին ասաց. «Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ. և նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը: Տերը կանչեց նրան եւ ասաց. “այս ի՞նչ եմ լսում քո մասին. տո՛ր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս տնտես լինել չես կարող”: Տնտեսը իր մտքում ասաց. “ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի, երբ տնտեսությունիցս հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները”: Եւ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է՝ “իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես”: Եվ սա ասում է՝ “հարյուր տակառիկ ձեթ”. և տնտեսը նրան ասում է՝ “ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու անմիջապես գրի՛ր՝ հիսուն”: Ապա դարձեալ մյուսին ասում է՝ “դու ինչքա՞ն պարտք ունես”. և սա ասաց՝ “հինգ հարյուր պարկ ցորեն”: Տնտեսը նրան ասաց՝ “ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու գրի՛ր՝ չորս հարյուր”: Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները ավելի հնարամիտեն, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ»:

Բնությունն անառակ որդու միջոցով էր խոսում, իսկ այստեղ պատմվում է, թե ինչ է անում տնտեսը՝ պարտատերերի կողմից ամբաստանվելուց հետո: Այնտեղ հայրն ընդառաջ է գնում և համբուրում կորած որդուն, իսկ այստեղ տերը գովում է անիրավ տնտեսին: Այնտեղ հայրն անառակ որդու մասին մառանի, ոտքերին կոշիկ է հագցնում և մորթում պարարտեզը, իսկ այստեղ Տերն ասում է, որ այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լույսի որդիները:

«**Եվ Հիսուս Իր աշակերտներին ասաց.** «**Մի մեծահարուստմարդ կար, որ մի տնտես ուներ**»: Մեծահարուստմարդն այստեղ մարդացած Աստված է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս: Եվ իրավ, միայն Նա է ճշմարիտմարդ: Մեծահարուստ է կոչվում, քանզի Նա առավել հարուստ է, քան ամբողջ աշխարհը, Նրատունը երկինքն է ու երկիրը:

Աստված երեք տուն կառուցեց. նախ՝ երկինքը՝ իմանալի աշխարհը. «**Իմաստությունը շինեց իր տունը**» (Առակ. Թ 1): Այստեղ տնտես հաստատեց հրեշտակներին, որոնց դեմ երբ ամբաստանություն եղավ, նրանց զրկեց տնտեսությունից և խավարի կապանքներով շղթայելով՝ փակեց սանդարամետում՝ ըստ այս խոսքի. «**Եվ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանությունը, այլ լքեցին իրենց բնակության տեղը, հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց Դատաստանի մեծ օրվահամար**» (Յուդա Ա 6): Տուն է կոչվում նաև Եդեմի պարտեզը, որտեղ տնտես կարգեց առաջին մարդուն՝ Ադամին: Եվ երբ նրա հացեին ամբաստանություն եղավ, նրան էլ դուրս հանեց Իր տանից՝ Դրախտից:

Տուն է կոչում նաև Եկեղեցին՝ Նոր Սիոնը: Տերը մեր բնությունն արդարացնելուց հետո մեզ համար շինեց Եկեղեցին, որտեղ տնտեսներ եղան նախ՝ մարգարեները, ապա՝ առաքյալները, այնուհետև՝ վարդապետները, հայրապետները, հովիվները և առաջնորդները:

Տուն է կոչվում նաև յուրաքանչյուր առանձին մարդ, ում մեջ տնտեսը նրամիտքն է: Նաև տուն է զգալի աշխարհը, որտեղ տնտեսներ են թագավորները: Քանի որ տնտեսը չունի իր սեփականությունը, այլ ամեն ինչ տիրոջ կողմից է նրան վստահվել, այդ պատճառով նաբազում հարկություններ պետք է ունենա: Նախ պետք է իր գործը միշտ ջանասիրությամբ կատարի և երբեք չծուլանա ժամանակին կերակուր պատրաստելիհոգաիր ծառայակիցների մասին: Իսկ եթե չլինի ջանասեր կամ էլ գողլինի և տիրոջ ունեցվածքը մսխի, լինի չարաբարո, անհնազանդ, անհամբեր, ժլատ և պղծություններ գործի, ապակարող է զրկվել տնտեսությունից:

Տնտեսի նման՝ մարդն էլ ոչինչ չունի և ամեն ինչ Աստծուց է ստացել՝ ըստ այս խոսքի. «**Ի՞նչ բան ունես, որ ստացած չլինես. և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես**» (Ա Կորնթ. Դ 7): Մարդը բոլոր պարգևներն Աստծուց է ստացել՝ և՛ քահանայությունը, և՛ մնացած ամեն ինչ, որպեսզի փոքրերի մեջ հավատարիմ լինելով՝ մեծին ու անճառելիին արժանանա: Արդ՝ ամեն ոք, ով Աստծուց շնորհ է ստանում, այդ շնորհի տնտեսն է և պարտավոր է տնտեսին վայել գործել, հակառակ դեպքում կզրկվի ունեցվածքից:

«**Եվ նրամահին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը**»: Ունեցվածքը երկու տեսակ է լինում՝ հոգևոր ու մարմնավոր, և սրանք բոլորն էլ Աստծունն են: Երկու կերպ է հնարավոր զրկվել տնտեսությունից, մեկը՝ երբ զրկվում ես պաշտոնից, մյուսը՝ կյանքից: Թեև Աստված ամենատես է և կարիք չունի ամբաստանություններ լսելու, սակայն մարդիկ, ձանձրանալով տիրող անօրենություններից հաճախ բողոքում են Աստծուն: Նաև հրեշտակները, տեսնելով ամբարիշտների գործերը, նրանց ամբաստանում են Աստծու առջև: «Տերը կանչեց նրան և ասաց. «**Այս ի՞նչ եմ լսում քո մասին. տո՛ւր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս տնտես լինել չես կարող**»: Այսպես ասաց, որպեսզի մեզ սովորեցնի, որ առանց քննության որևէ մեկին չի դատում: Եվ ով հաստատվում է չարության մեջ, այլևս չի կարողանում բարին գործել: «Տնտեսն իր մտքում ասաց. «**Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ**»: Պաշտոնից զրկվածն իսկապես այլևս չի կարողանում գործել և ամաչում է մուրալ: Կյանքից զրկվածը նույնպես այլևս չի կարողանում գործել, քանզի գործելու ժամանակն անցել է, և չկա այլևս ապաշխարության ժամանակ, որ քերի իր հոգու փտերը և չարի փոխարեն

բարին անի: Իսկ մահանալուց հետո մուրալն ամոթ է, քանզի հանդերձյալ կյանքում մուրալու տեղ չկա և ոչ ոք չի տա ինդրվածքը, ինչպես հիմար կույսերն իմաստուններից յուղ ինդրեցին և չստացան (տե՛ս Մատթ. ԻԵ 8-9):

«**Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի, երբ տնտեսությունից հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները**»: Տնտեսը փորձում է իր տիրոջ ունեցվածքով բարեկամներ շահել: Այն, ինչ ագահությամբ ժողովեց, այժմ փութապես կամենում է տալ աղքատներին և արտաքուքով ու խոստովանությամբ ընկնելով Աստծու առջև՝ հառաջանքով Նրանից թողություն է ինդրում:

«Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է. «**Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես**»: Եվ սա ասում է. «**Հարյուր տակառիկ ձեթ**». և տնտեսը նրան ասում է. «**Առ քո մուրհակը և նստի՛ր ու անմիջապես գրի՛ր՝ հիսուն**»: Ապադարձյալ մյուսին ասում է. «**Դու ինչքա՞ն պարտք ունես**». և սա ասում է. «**Հարյուր պարկ ցորեն**»: Տնտեսը նրան ասում է. «**Առ քո մուրհակը և նստի՛ր ու գրի՛ր՝ ութսուն**»: Թեև տնտեսն անիրավ էր, սակայն իր ունեցվածքից բաշխելով աղքատներին՝ դրանով բարեկամներ շահեց: Մուրհակները նրանց ձեռքը տվեց և հրամայեց պարտքը նվազեցնել, որպեսզի նրանք բարեկամանան իր հետևիրեն ընդունեն իրենց տանը, այսինքն՝ Երկնքի արքայությունում, որն աղքատների տունն է՝ ըստ այս խոսքի. «**Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը**» (Մատթ. Ե 3):

«**Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց**»: Թեև տնտեսը վատնում է Տիրոջ ունեցվածքը, սակայն այս անգամ իմաստությամբ է գործում, որովհետև բարեկամներ է շահում և գովության արժանանում: Քանզի քաջալերեց հոգուն և մարմնին՝ հուսալ Աստծու ողորմությանը, նրանով, որ եթե ինքը կեսը թողեց, ապա եթե նրանք դիմեն Տիրոջը, Նա ամբողջը կթողնի: Սա չկարողացան անել չարի հրեշտակները, երբ Տերը նրանց զրկեց իրենց տնտեսությունից:

«**Քանի որ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտեն, քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ**»: Լույսի որդիները հրեշտակներն են, քանզի լույսից արարվեցին: Մարդկանց ավելի իմաստուն է ասում, քան հրեշտակներին, որովհետև մարդիկ փառքից զրկվելուց և Աստծուց օտարանալուց հետո հնար գտան ապաշխարությամբ փնտրելու Աստծուն ու Նրան մոտենալու, իսկ հրեշտակների դասերից շեղվածները՝ է՛լ ավելի չարացան և չիմացան, որ Նա Ով հանցանքների պատճառով իրենց բարձունքից վայր է գցել, զորություն ունի նաև դառնալու: Սրանք այս մասին խորհելու փոխարեն՝ անմտորեն պատերազմեցին Աստծու պարկերի՝ մարդու դեմ և նրան խաբեությամբ համոզեցին գործակից լինել իրենց անօրենություններին: Սրանով մեր բնությունն ապականեցրին, Աստծու Որդուն դեպի խաչը բերեցին, որով պարտական մնացին մեզ համար **խաչված Աստծու** անմահ մահվանը և մեզ համար հեղված Նրա անարատ Արյանը, և Աստծու վրեժինդրությունը հարուցեցին: Եթե սրանք հանցանքից անմիջապես հետո ապաշխարեին և Աստծուն հնազանդվեին, ապա մեր բնությունը չէր ապականվի, և ահեղ դատաստանը նրանց չէր սպառնա: Եթե իմաստուն լինեին, ապաշխարելի կլինեին, քանզի ունեին անմահ և անապական բնություն, որը նրանցից չվերցվեց նրանց անկման ժամանակ: Սրանք են հրեշտակների անմտությունը և մարդկանց իմաստությունը, որովհետև մարդը գիտի վտանգի պահին Աստծուն դառնալ, Արարչից ինքնամբ գտնել և թողության հույս ունենալ: Քանզի ավելի իմաստուն են նրանք, ովքեր գտնում են հնարավորություն, քան նրանք, ովքեր հոգ չեն տանում իրենց փրկության համար:

Անիրավ տնտեսը խորհրդանշում է այն բոլոր մեղավորներին, ովքեր ներում են իրենց պարտապանների պարտքերը և աղքատներին առատաբար բաշխում իրենց սիրելի մամոնային՝ հարստությունն ու ունեցվածքը, կամ էլ, ներելով պարտքերը, իրենց սիրելիներ են դարձնում հրեշտակներին ու արդարներին:

Ունկդրիր լռությունը

Մի անգամ գյուղացին հանկարծ նկատեց, որ իր ժամացույցը կորցրել է խտտվելի ցափառանը: Երկար և ապարդյուն փնտրելուց հոգնեց և որոշեց փողոցում խաղացող երեխաների օգնությանը դիմել՝ պարգև խոստանալով գտնողին: Երեխաները ոգևորությամբ ցափառուն վազեցին, ամեն ինչ տակնուվրա արեցին, սակայն այդպես էլ չգտան: Նրանց հեռանալուց հետո մի փոքրիկ տղամոտեցավ մարդուն և խնդրեց իրեն մի հնարավորություն էլ տալ: Քանի որ այլևս կորցնելու բան չկար՝ գյուղացին համաձայնեց:

Ի զարմանս նրա՝ տղան շուտով դուրս եկավ ցափառնից և բերեց ժամացույցը: Գյուղացին շատուրախացավ և զարմացած հարցրեց, թե նրան ինչպե՞ս հաջողվեց գտնել այն, երբ այդքան երեխաները չկարողացան: Տղան պատասխանեց.

-Ես ոչինչ չարեցի: Ուղղակի նստեցի և սկսեցի լսել: Լռության մեջ լսեցի ժամացույցի տկտկոցն ու գնացի ձայնի ուղղությամբ:

Առակի մեկնաբանությունը

Ուղեղը խաղաղ վիճակում ավելի լավ է մտածում, քան երբ որ ծանրաբեռնված է մտքերով: Ամեն օր ձեր ուղեղին հնարավորություն տվեք մի քանի րոպե լինել լռության մեջ և կտեսնեք, թե ինչպես այն կդարձնի ձեր կյանքն ավելի արդյունավետ:

Առակ հպարտ ծառի մասին



Միայգում մայրի էր աճում: Ամեն տարի այն ավելի ու ավելի էր մեծանում՝ դառնում ավելի վեհ ու գեղեցիկ:

Նրա փարթամ սաղարթափիտերևները վեր էին խոյանում իրեն շրջապատող ծառերից և ստվեր նետում դրանց վրա: Սակայն որքան նա աճում էր ու վեր բարձրանում, այնքան ուժգնանում էր նրա մեջ անսահման գոռոզությունը:

Արհամարհանքով նայելով շուրջը՝ մեկ օր նա հրամայում է.

— Հեռացրեք աչքիցս այն խղճուկ պնդուկի ծառը:

Եվ այն արագորեն արմատախիլ են անում և հեռացնում:

— Ազատեք ինձ այս անտանելի թզենու հարևանությունից: Այն ձանձրացնում է ինձ իր հիմար տեսքով,- հրամայում է մի օր քմահաճ մայրին և թզենուն անմիջապես հեռացնում են:

Ինքն իրենից գոհ մայրին հպարտորեն թափահարում է իր փարթամ տերևները և շարունակ բողոքում իրեն շրջապատող ծառերից.

-Ինձ շրջապատող տարածքից հեռացրեք այդ հին տանձենիներն ու խնձորենիները,- ծառերը կտրվում են ու խարույկի փայտի վերածվում:

Եվ այդպես անհանդուրժող մայրին հրամայում է կտրել բոլոր իրեն շրջապատող ծառերը՝ դառնալով այգու միակ ու լիիրավ տերը: Սակայն պարտեզի նախկին գեղեցկությունից ոչինչ չի մնում, միայն կոճղեր:

Եվ մեկ օր ուժեղ փոթորիկ է սկսվում: Հպարտացած մայրին ամեն կերպ փորձում է չթեքվել՝ հսկա արմատներով կառչելով հողից: Սակայն քամին, իր ճանապարհին չհանդիպելով այլ ծառերի, առանց որևէ խոչընդոտի հարձակվում է միայնակ կանգնած գեղեցիկ ծառի վրա և անխնա կոտրատում այն: Վերջիվերջո, տանջված ու ուժասպառ մայրին այլևս չի կարողանում դիմակայել քամու կատաղի հարվածներին, ճաքում է և գետնին տապալվում:

Առակի մեկնաբանությունը

Ինչպես ծառերը, այնպես էլ մենք կարիք ունենք միմյանց, կարիք ունենք, որ թե՛ փոթորիկների ժամանակ, թե՛ խաղաղության մեջ միմյանց նեցուկ լինենք, օգնենք ու միասին դիմակայենք ցանկացած իրավիճակի: Երբեք մի՛ անտեսիր մարդկանց, ովքեր քո կողքին են գտնվում, ու ինքդ քեզ նրանցից բարձր մի՛ դասիր, այլապես, գուցե մի օր էլ փոթորիկ լինի ու բացահայտես, որ բոլորին հեռացրել ես քո կողքից ու մնացել ես մենակ...

Նա, ով գիտելիք է ստանում, կորցնում է դրա մասին խոսելու հնարավորությունը

Երեք թիթեռներ, մոտենալով վառվող մոմի, սկսեցին քննարկել կրակի բնույթը: Նրանցից մեկը, մոտենալով կրակին, վերադարձավ ու ասավ.
— Կրակը լույս է տալիս:

Մյուսը ավելի մոտ գնաց կրակին ու այրեց թևը: Վերադառնալով՝ նա ասաց.
— Կրակն այրում է:

Երրորդը շատ-շատ մոտ գնաց, կրակի մեջ անհետացավ ու չվերադարձավ: Նա իմացավ այն, ինչ ցանկանում էր իմանալ, բայց արդեն չկարողացավ հայտնել դրա մասին մնացածին:

Առակի մեկնաբանությունը

Նա, ով գիտելիք է ստանում, կորցնում է դրա մասին խոսելու հնարավորությունը. դրա համար էլ իմացողը լռում է, իսկ խոսողը չգիտի…

Առակ բարի սամարացու մասին



Մի մարդ Երուսաղեմից գնում էր Երիքով և ավազակների ձեռքն ընկավ, որոնք մերկացրին նրան, ծեծեցին ու կիսամեռ թողնելով՝ հեռացան: Այնպես պատահեց, որ մի քահանա իջնում էր այդ ճանապարհով, բայց երբ տեսավ նրան, ճանապարհի մյուս կողմով անցավ-գնաց: Այդպես էլ մի ղևտացի, երբ հասավ այնտեղ ու տեսավ նրան, ճանապարհի մյուս կողմով անցավ-գնաց: Բայց մի սամարացի, որ անցնում էր այդ ճանապարհով, տեսավ նրան ու կարեկցանքով լցվեց,

մոտեցավ ու կապեց նրա վերքերը՝ դրանց վրա ձեթ ու գինի լցնելով։ Ապա նրան դրեց իր էշի վրա, բերեց մի իջևանատուն և հոգ տարավ նրա մասին։ Հաջորդ օրը երկու դինար հանեց, տվեց իջևանատիրոջն ու ասաց. «Հոգ տար նրա մասին, իսկ եթե սրանից ավել ծախսես, կվճարեմ քեզ, երբ վերադառնամ»։ Ըստ քեզ՝ այս երեքից ո՞ր մեկը մերձավոր եղավ ավազակների ձեռքն ընկած մարդու համար։ Օրենսգետը պատասխանեց. «Նա, ով ողորմածաբար վարվեց նրա հետ»։ Հիսուսն ասաց նրան. «Գնա և դու էլ այդպես արա»։

Առակի մեկնաբանությունը

Այս առակի միջոցով Հիսուսը սովորեցնում է , որ անհրաժեշտ է բարի և ուշադիր լինել բոլորի նկատմամբ , օգնել նեղության մեջ գտնվողներին , սիրել և հարգել մարդկանց։

Առակի նպատակն է պատասխանել այն հարցին , թե ով է ճշմարիտ բարեկամը ։Ճանապարհորդը տաճարի պաշտոնյաներին միշտ համարել է իրեն բարեկամ ։Բայց նրանք անտեսեցին ծանր վիճակում գտնվող մարդուն։Դրան հակառակ սամարացին, որն օտարական էր , կանգ առավ և օգնեց նրան։Ուրեմն վիրավոր ճանապարհորդի իսկական ընկերը , բարեկամը ոչ թե նրա ազգակից հոգևորականն ու պաշտոնյան էին, այլ օտար սամարացին։

Սիրել ընկերոջը՝ չի նշանակում սիրել միայն հարազատին կամ ծանոթին, ոչ էլ միայն հաճելի խոսքեր ասել մարդկանց։Պետք է սիրել ոչ միայն խոսքով ։Անհրաժեշտ է սիրել նաև գործով։

Մի ունեցիր հարյուր դահեկան, այլ ունեցիր հարյուր բարեկամ։
Հավատարիմ բարեկամ , ընկեր ունենալը մեծ երջանկություն է։

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Մի սերմնացան ցանում է իր արտը։Ցանելու ժամանակ սերմերի մի մասը ընկնում են ճանապարհի եզրին ։Սերմերը բաց են մնում , և թռչունները դրանք ուտում են։

Սերմերից մի քանիսը քարքարոտ ապառաժի վրա են ընկնում ։Դրանք շուտ ծլում և կանաչում են , բայց երբ արևը ծագում է , ծիլերը խանձվում ու չորանում են , որովհետև նրանք խոր արմատներ չունեին։

Սերմերի մի մասն էլ փշերի մեջ են ընկնում ։Սրանք էլ են ծլում , սակայն մեծանալ ու պտուղ տալ չեն կարողանում , որովհետև փշերը բարձրանում ու խեղդում են ծիլերը։

Մյուս սերմերն ընկնում են պարարտ հողի մեջ և աճելով ՝ ցորենով լի հասկեր են դառնում ։ Սերմերը բերք են տալիս ՝ մեկի դիմաց երեսուն , վաթսուն , հարյուր …

Առակի մեկնաբանությունը

Այս առակում սերմնացանը նման է Հիսուսին ։Սերմնացանը ցորեն է ցանում , իսկ ինքը Աստծու խոսքն է տարածում։Սերմերը իր քարոզներն են ։Հողը, ապառաժ քարը, ճանապարհը և փշերը տարբեր մարդիկ են ։

Ճանապարհը նման է մարդկանց , ովքեր լսում են Աստծու խոսքը , բայց ուշադրություն չեն դարձնում։Այդպիսի մարդիկ սոսկ իրենց հաճույքների մասին են մտածում և ամեն բան անում են միայն անձնական շահի համար ։Այդ պատճառով չարը հեշտությամբ մոլորեցնում է նրանց , և նրանք մոռանում են Աստծու խոսքը։

Քարքարոտ հողը բնութագրում է այն մարդկանց , ովքեր լսում են Աստծու խոսքը և իսկույն ուրախությամբ ընդունում այն։Նրանք ցանկանում են բարիք գործել , բայց քանի որ նրանց հավատն ամուր հիմքեր չունի , դժվարության կամ նեղության պահին շեղվում են ճիշտ ճանապարհից։

Փշոտ , մոլախոտերով լի հողը համեմատվում է այն մարդկանց հետ , ովքեր լսում են Աստծու խոսքը և ցանկանում հետևել նրան , բայց կյանքի դժվարությունները , հարստության հրապույրն ու զանազան ցանկությունները գրավում են նրանց։ Այդ մարդիկ չեն հրաժարվում վատ սովորություններից , որոնք փշի նման խեղդում են նրանց մեջ Աստծու խոսքն ու բարիք գործելու ցանկությունը։

Իսկ պարարտ, լավ հողը նման է այն մարդկանց , ովքեր լսում, հասկանում և պահպանում են Աստծու խոսքը։Այդպիսի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, ինչպես ցորենի սերմնահատիկը։

Որոմների առակը

Մի ագարակատեր մշակներին պատվիրում է հողը մաքրել փշերից ու քարերից և այնտեղ ցորեն ցանել։Գիշերը , երբ բոլորը քնած են լինում, չարակամ մարդիկ գաղտագողի գալիս են և ցորենի արտում որոմ շաղ տալով՝ հեռանում են։ Որոշ ժամանակ անց , երբ սերմերը ծլում են և կանաչում , մշակները զարմանում են, թե որոմները որտեղից հայտնվեցին ։Նրանք ագարակատիրոջը հայտնում են եղելությունը և հարցնում . << Որտեղից հայտնվեց որոմը, չէ որ մեր ցանածը բարի սերմեր էին …>>։

Առակի մեկնաբանությունը

Ազարակատերը պատասխանում է , որ հավանաբար չար մարդու կատարած գործ է :Մշակները խնդրում են , որ իրենց թույլ տրվի արտը մաքրել որոմներից :Սակայն ազարակատերը թույլ չի տալիս ՝ մտածելով , որ որոմները քաշելիս կարող են անզգուշաբար վնասել նաև ցորենի հասկերը :Նա չէր ցանկանում , որ մեկ հասկ անգամ վնասվի , ուստի որոշեցին թողնել , որ ցորենն էլ, որոմն էլ միասին աճեն :Հնձելուց հետո ցորենը կառանձնացնեն և կամբարեն , իսկ որոմը կայրեն:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ

Պատմություն, Գրականություն, Արվեստ, Աշխարհագրություն, Համաշխարհային պատմություն

Եզրակացություն

Հիսուս Քրիստոսը երկրի վրա երբևէ ապրած մեծագույն ուսուցիչն էր։ Նրա սիրած ուսուցանելու մեթոդներից էր առակներ պատմելը (Մատթ. 13:34)։ Առակները վառ նկարագրություններ են ստեղծում մարդու մտքում, որոնք մղում են մտածելու և հասնում են նրա սրտին։Առակներից որոշները, ինչ խոսք, խորհրդանշական և մարգարեական նշանակություն ունեն, մյուսներն էլ գործնական դասեր են պարունակում։ Օրինակ՝ նկատի առնենք, թե ինչպես էինք բացատրում բարի սամարացու մասին առակը (Ղուկ. 10:30–37).սամարացին ներկայացնում է Հիսուսին, Երուսաղեմից Երիքով իջնող ճանապարհը՝ մարդկության վատթարացող վիճակը՝ սկսած Եդեմի ապստամբությունից, ավազակները՝ մեծ ընկերություններին ու սպեկուլյանտներին, իսկ քահանան ու ղևտացին խորհրդանշում են քրիստոնեական աշխարհը։ Բարի սամարացու առակի միջոցով երեխաները սովորում , են որ հարկավոր է անկողմնակալ կերպով օգնել կարիքի մեջ եղողներին։
Աստվածաշնչյան առակները երեխաներին սովորեցնում են լինել ազնիվ, ճշտորեն կատարել մեզ հանձնարարված գործերը, չթաղել մեր ունակությունները, այլ դրանցով ծառայել Աստծուն եւ մարդկանց։

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ։ Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը։

Երեխաները սիրում են սովորել օրինակով. ընդօրինակելը նրաց համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը։ Առակը դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է սովորողներին իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ։

Գրականության ցանկ

- **Աստվածաշունչ**
- **Քրիստոնեական հանրամատչելի գիտելիքներ բոլորի համար**
- **Ադամ քահանա Մակարյան «Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)»**
- QAHANA.am
- **<<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի դասագիրք**
- hy.wikipedia.org